

աւրն հաւր մերոյ Հասանայ եւ . . . աւրն եղբաւր մերոյ Սեւադէի եւ ր (2) աւրն մաւր մերոյ Մամխաթուն(ին) . . . » :

1265էն ուրիշ արձանագրութեան մը մէջ, ուր փճացած է անունը Հասանի թոռան, կը յիշուի երկիցս « . . . Հասանայ եւ Մամա Սաթունի . . . » : Եւ գարձեալ՝ « . . . ր (2) Հասանա գատիկն, ր (2) Մամա Սաթունին՝ Վարդաւառին . . . » (Յիշատ . 7) :

Հասան եւ Մամա Սաթուն կամ Մամխաթուն ունեցեր են Սեւադէ, Խերխան, Մարծպան եւ Մամիկոն անունով որդիներ :

Ս Ե Ի Ա Դ Է

Հասանի եւ Մամա Սաթունի որդին էր, որ միայն կը յիշուի Շիրազի Կարմիր Աւետարանին յիշատակութեան մէջ. « . . . Մարծպանս Մամիկոն . . . ա (1) աւրն հաւր մերոյ Հասանայ եւ . . . աւրն եղբաւր մերոյ Սեւադէի եւ ր (2) աւրն մաւր մերոյ Մամխաթուն(ին) . . . » (Յիշատ . 6) :

Սեւադէ անուիր անուն մը չէ Հայոց մէջ այդ շրջանին, որով դժուար է գինքը նոյնացնել ուրիշ ծանօթ Սեւադէներու հետ : Կ'երեւի թէ մեռած էր վերի յիշատակութեան գրութեան ատեն : Նոյն Կարմիր Աւետարանին մէջ երկրորդ անթուական յիշատակութիւն մը նոյնպէս հաւանաբար մեռած ցոյց կու տայ Սեւադէն 1233էն քիչ վերջ : Հոն կը վկայուի. « . . . Ես Հայրական եւ բէցս դնեցի զս(ուր)բ աւետարանս, Սեւադայ որդոյ Վախտանիկէ ի հալալ արդեանց իմոց . . . » (Յիշատ . 8) : Ինչպէս որոշ կ'երեւի Սեւադէի որդին Վախտանի Կարմիր Աւետարանը կը վաճառէ Հայրական երէցին, անշուշտ կտակ ստացած ըլլալով իր հօրմէն : Սեւադէի մահէն վերջ եւ հաւանաբար Աւետարանին վաճառուելէն առաջ Մարծպանի եւ իր եղբոր Մամիկոնի նուիրատուութիւնը գրուեցաւ հոն, Հասանի, Սաթունի եւ Սեւադէի հօգուոյն պատարագ խնդրելէ վերջ : Սակայն Կոչիկ անապատի արձանագրութեան մէջ, որուն 1265 թուականը կը վերագրուի, կը յիշուի. « . . . Ես Սեւադա տլի զԳրիգորանանց . . . » (Յիշատ . 7) : Արդեօ՞ք նոյն Սեւադէն է, թէ՛ Հասանի որդի Սեւադէի սերունդէն համանուն մէկը : Արձանագրութեան վերընթերցումը զուցէ կարելոր է ճշդելու համար թէ՛ թուականը, եւ թէ՛ այս արձանագրութեան ամբողջութիւն մը ըլլալը :

Խ Ե Ր Խ Ա Ն

Որդին Հասանայ եւ Մամա Սաթունի : Իր անունին կը հանդիպինք անգամ մը միայն, իր Մարծպան եւ Մամիկոն եղբայրներուն հետ, Կոչիկ անապատի 1265էն արձանագրութեան մէջ, ուր Խերխան կ'ըսէ. « . . . Խերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս, ես Խերխան (կարդացուած էրիվան) շի(նեցի) զՍուրբ Ստեփաննոս եւ նորոգեցի զայլ եկեղեցիքս եւ զարդարեցի . . . Ժ (10) աւր ժամ Բ (2) Հասանա՝ Զատիկին . Բ (2) Մամա Սաթունին՝ Վարդաւառին . Ա (1) Ռուզու(զանս) . . . Բ (2) Խերխանին՝ Յայտնութեան . . . կատարին, . . . » (Յիշատ . 7) : Արդեօ՞ք Ռուզուզան Խերխանի ամուսինն էր, կամ քոյրը, որ հոս կը յիշուի :

Մ Ա Ր Ծ Պ Ա Ն Ա

Հասանի եւ Մամա Սաթունի որդին էր որ կը յիշուի իր եղբոր Մամիկոնի հետ Շիրազի համալսարանին Կարմիր Աւետարանին անթուական